« 12 » հոկտեմբեր 2026թ. No 5933 - Ա

**«ՑԱՎԸ ՈՐՊԵՍ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԲԺՇԿԻ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ**

**2026թ.-ից կրկնողաբար, առցանց («Զում» հարթակ)**

**«Գլոբալ Մեդ» ՍՊԸ**

- Թիրախային լսարան՝ թերապևտներ, ընտանեկան բժիշկներ, սրտաբաններ, անհետաձգելի օգնության բժիշկներ, թոքաբաններ, աղեստամոքսաբաններ, մանկաբարձ-գինեկոլոգներ, ուրոլոգներ, երիկամաբաններ
- Մասնակիցների ակնկալվող թվաքանակ՝ մինչև 50 հոգի
- մասնակիցներին շնորհել ՇՄԶ 25 տեսական կրեդիտ.
  դասավանդողներ Լալա Գևորգյանին՝ ՇՄԶ 8 տեսական կրեդիտ, Անգելինա Աղաջանովային՝ ՇՄԶ 8 տեսական կրեդիտ, Նարինե Բեգլարյանին՝ ՇՄԶ 8 տեսական կրեդիտ
- Կոնտակտ 093460560

| | | |
|---|---|---|
| **Օր 1** | | |
| 19:00-21:30 | **Դասախոսություն**<br>Նախաթեստ:<br>Ցավի կլինիկական նշանակությունը: Ցավի առաջացման ֆիզիոլոգիական և պաթոֆիզիոլոգիական մեխանիզմները:<br>Ցավի դասակարգումը և բնութագրումը:<br>Կրծքավանդակի ցավի սիրտ-անոթային պատճառները: Սրտի իշեմիկ հիվանդություն, սուր կորոնար համախտանիշ և այլ կյանքին սպառնացող վիճակներ:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ կրծքավանդակի ցավով պացիենտի առաջնային գնահատում և անհետաձգելի վիճակների ճանաչում ընտանեկան բժշկի պրակտիկայում | Լալա Գևորգյան |
| **Օր 2** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Կրծքավանդակի ցավի շնչառական համակարգի հետ կապված պատճառները: Թոքային և պլևրալ ծագման հիվանդությունների կլինիկական դրսևորումները:<br>Կրծքավանդակի ցավի մարսողական համակարգի հետ կապված պատճառները:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ կրծքավանդակի ցավի սրտային և ոչ սրտային պատճառների տարբերակում առաջնային բուժօգնության պայմաններում | Լալա Գևորգյան |
| **Օր 3** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Կրծքավանդակի ցավը հոգեսոմատիկ և սոմատոփսիխիկ խանգարումների համատեքստում, ոսկրամկանային և | Լալա Գևորգյան |

| | | |
|---|---|---|
| | նյարդաբանական պատճառներ: Կլինիկական դեպքի քննարկում՝կրծքավանդակի կրկնվող ցավով պացիենտի կլինիկական գնահատում՝ օրգանական և ֆունկցիոնալ պատճառների տարբերակում | |
| **Օր 4** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Կրծքավանդակի ցավի տարբերակիչ ախտորոշման ժամանակակից մոտեցումներ: Կլինիկական որոշումների ընդունման ալգորիթմներ, ռիսկի գնահատման սանդղակներ և անհետաձգելի վիճակների վաղ հայտնաբերում:<br>Կլինիկական դեպքի քննարկում | Լալա Գևորգյան |
| **Օր 5** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Որովայնային ցավ. ֆունկցիոնալ խանգարումից մինչև օրգանական պաթոլոգիա:Էպիգաստրալ ցավի կլինիկական գնահատում: Ֆունկցիոնալ դիսպեպսիա՝ դասակարգում, ախտորոշիչ չափանիշներ, տարբերակիչ ախտորոշում և ժամանակակից վարման մոտեցումներ:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ էպիգաստրալ ցավով պացիենտի առաջնային գնահատում. ֆունկցիոնալ դիսպեպսիայի և օրգանական պաթոլոգիայի տարբերակում: | Անգելինա Աղաջանովա |
| **Օր 6** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Տարածուն որովայնային ցավ: Ֆունկցիոնալ աղեստամոքսային խանգարումներ, տարբերակիչ ախտորոշում և վարման ժամանակակից ալգորիթմներ:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ տարածուն որովայնային ցավով պացիենտի գնահատում և «կարմիր դրոշների» հայտնաբերում: | Անգելինա Աղաջանովա |
| **Օր 7** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Քրոնիկ որովայնային ցավ աղիների բորբոքային հիվանդությունների դեպքում: Մալաբսորբցիոն համախտանիշի կլինիկական դրսևորումները և ախտորոշման մոտեցումները:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ քրոնիկ որովայնային ցավով պացիենտի տարբերակիչ ախտորոշում: | Անգելինա Աղաջանովա |
| **Օր 8** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Համակարգային հիվանդություններով պայմանավորված որովայնային ցավ: Կլինիկական դրսևորումներ, տարբերակիչ ախտորոշում և վարման մոտեցումներ:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ համակարգային հիվանդության դրսևորում հանդիսացող որովայնային ցավի ճանաչում և ախտորոշիչ ռազմավարության ընտրություն: | Անգելինա Աղաջանովա |
| **Օր 9** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Ցավ կոնքում: Կոնքային ցավի ախտորոշման և վարման ժամանակակից մոտեցումներ :Կոնքային ցավի կլինիկական գնահատման ընդհանուր մոտեցումներ: Սուր և քրոնիկ կոնքային ցավի հիմնական պատճառները, անամնեզի և ֆիզիկական զննման առանձնահատկությունները:Սուր կոնքային ցավի ֆենոմենը,տրիաժ և կարմիր դրոշակներ: | Նարինե Բեգլարյան |

| | | |
|---|---|---|
| | Կլինիկական դեպքի քննարկում՝ կոնքային ցավով պացիենտի առաջնային գնահատում և ախտորոշիչ քայլերի հաջորդականության որոշում: | |
| **Օր 10** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Քրոնիկ կոնքային ցավի համալիր կառավարում: Բազմամասնագիտական մոտեցում, ցավի գնահատում և երկարաժամկետ վարման ռազմավարություններ:<br>Կլինիկական դեպքի քննարկում ՝քրոնիկ կոնքային ցավով պացիենտի համալիր գնահատում և անհատականացված վարման պլանի մշակում: | Նարինե Բեգլարյան |
| **Օր 11** | | |
| 19:00-21:00 | **Դասախոսություն**<br>Կոնքային ցավի տարբերակիչ ախտորոշում: Գինեկոլոգիական, ուրոլոգիական, աղեստամոքսային, մկանա-կմախքային և նյարդաբանական պատճառների տարբերակում:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝ կոնքային ցավի բազմապատճառային համախտանիշի տարբերակիչ ախտորոշում: | Նարինե Բեգլարյան |
| **Օր 12** | | |
| 19:00-21:30 | **Դասախոսություն**<br>Կոնքային ցավի ախտորոշման ժամանակակից մեթոդներ և բուժական ռազմավարություններ: Ախտորոշիչ և թերապևտիկ մոտեցումների ընտրություն՝ հիմնված կլինիկական տվյալների վրա:<br>Կլինիկական դեպքի քննարկում՝բարդ կլինիկական դեպքի համալիր քննարկում՝ ախտորոշում, տարբերակիչ ախտորոշում և անհատականացված բուժական ռազմավարության մշակում:<br>Հետթեստ | Նարինե Բեգլարյան |